

Հաշվետվություն

Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնքի ղեկավարի

2011 թվականը Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնքի 2009-2012թթ սոցիալ – տնտեսական զարգացման քառամյա ծրագրի երրորդ տարին է, որի ընթացքում համայնքը ևս մեկ քայլով մոտեցավ ծրագրում նախանշված նպատակներին:

Հաշվետու տարվա ընթացքում համայնքում իրագործված ծրագրերը և կատարված աշխատանքները հիմնականում բարենպաստ էր համայնքի համար :

Նշենք այն հիմնական ուղղությունները , որտեղ , շնորհիվ կատարված ներդրումների ու իրականացված ծրագրերի գրանցվեց մեծ առաջընթաց և համայնքը հայտնվեց սոցիալ – տնտեսական զարգացման որակապես նոր մակարդակի վրա:

1. Զգալիորեն բարելավվեց ջրամատակարարման վիճակը , մասնավորապես խմելու ջրի ջրահավաք ցանցին միացվեց մոտ 2 լ/վ ջրի պաշար ունեցող « Ռեսանի » կոչվող աղբյուրը և կատարվեցին կապտածների մաքրման և վերանորոգման աշխատանքներ , որի շնորհիվ ավելի քան 4 ժամով երկարացվեց ջրամատակարարման տևողությունը և զգալիորեն բարելավվեց խմելու ջրի որակը:

Այս բնագավառում անելիքները դեռևս շատ են:

Կան խմելու ջրի պաշարը ավելացնելու պոտենցիալ հնարավորություններ : Սակայն ամենացավոտ հարցը մնում է խմելու ջրի ներքին ցանցի մաշվածությունը , որը բերում է հաճախակի վթարների : Ներքին ցանցի խողովակաշարի որոշ հատվածներ ունեն ավելի քան 30-40 տարվա պատմություն և շահագործման համար պիտանի չեն :

2. Մյուս կարևոր ձեռքբերումը , որը համարում են ամենակարևորներից մեկը , դա Գեղամավան - Գագարին , ավելի քան 6 կմ երկարությամբ ավտոճանապարհի շինարարությունն էր համաշխարհային բանկի միջոցներով : Արդեն շահագործման է հանձնված միջազգային չափանիշների և ժամանակակից պահանջներին համապատասխան այս ավտոճանապարհը , որը կենսական նշանակություն ունի ոչ միայն Գեղամավան համայնքի այլև շրջակա բոլոր համայնքների համար, հանդիսանալով համայնքներն իրար կապող և Երևան – Սևան մայրուղուն միացնող բարեկարգ ճանապարհ՝ կառուցված անցուղիներով, ջրահեռացման համակարգով :

3. Ավտոճանապարհի կառուցմանը զուգընթաց , համայնքի բյուջեի միջոցներով կառուցվեց և այժմ արդեն շահագործվում է փողոցային լուսավորության ցանցի հիմնական հատվածը, որի երկարությունը մոտ 2 կմ է :

4. Ձեռքբերում են համարում նաև Հրազդան գետի վրա հետիոտնային կամրջի կառուցումը : Մեր բազմաթիվ խնդրանքների և դիմումների շնորհիվ վերջապես իրականություն դարձավ և որի կարիքը այնքան խիստ զգացվում էր 2010 թվականի հայտնի ողբերգությամբ ուղեկցված փլուզումից հետո :

5. 2011 թվականին մեկնարկեց համայնքի համար կենսական նշանակություն ունեցող ևս մեկ ծրագիր , որով նախատեսված է Գեղամավանի կուլտուրայի տան շենքի հիմնանորոգումը : Այս ծրագրի շրջանակներում արդեն ավարտին է հասցված կուլտուրայի տան շենքում նախատեսված հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքները: Սակայն այստեղ էլ բավականաչափ խնդիրներ կան մասնավորապես շենքը չունի ջեռուցման համակարգ և հանդիսությունների սրահի շահագործման համար անհրաժեշտ է ավելի քան 7 մլն դրամի ներդրումներ գույքի և սպասքի ձեռքբերման համար , որը նախատեսվում է իրականացնել 2012թ-ի տեղական բյուջեի միջոցներով :

6. Կրթության , մշակույթի , երիտասարդության , ինչպես նաև նախադպրոցական կրթության հարցերը մշտապես եղել են և մնում են մեր ուշադրության կենտրոնում : Համայնքի հիմնախնդիրներից է նախադպրոցական կրթության կազմակերպումը , որը իր անհերքելի դրական ազդեցությունը կունենա դպրոցական կրթության մակարդակի բարձրացմանը : Յավոք, համայնքի բյուջեի հնարավորությունները այնքան սուղ են , որ մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը սեփական միջոցներով անհնար է : Սակայն մենք ունենք բավարար միջոցներ նախադպրոցական կրթությունը կազմակերպելու և իրականացնելու համար : Այդ իսկ պատճառով մանկապարտեզի վերանորոգման ծրագրում ընդգրկվելու բազմաթիվ , առայժմ ապարդյուն փորձերից հետո մեր նախաձեռնությամբ ու ջանքերի շնորհիվ 2011 թվականին Գեղամավանի միջնակարգ դպրոցում բացվեց և համայնքի ու նախադպրոցական կրթության ծրագրերի իրագործման գրասենյակի համատեղ ֆինանսավորմամբ գործում է նախակրթարանը , որի սաներն են համայնքի թվով 26 նախադպրոցական տարիքի երեխաներ :

Հաշվետու տարվա ընթացքում համայնքում պատշաճ կերպով կազմակերպվել և անցկացվել են Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումները :

Մեր կողմից նախաձեռնվել և իրականացվել է ամանօրի նախաշեմին գյուղի փողոցների տոնական տեսքի բերելու աշխատանքները, ինչպես նաև դպրոցի 1 - 4-րդ դասարանի և նախակրթարանի սաներին Չմեռ պապի նվերներով ապահովելը :

7. Գյուղատնտեսության բնագավառում նշանակալի ձեռքբերում են համարում Գեղամավան համայնքում « Արոսօգտագործողների կոոպերացիա » սպառողական կոոպերատիվի հիմնադրումը , որը մեծ խթան պետք է հանդիսանա գյուղացիական տնտեսությունների խոշորացման , անասնազվխաքանակի ավելացման և մթերատվության բարձրացման գործում :

ՀՀ գյուղատնտեսության նախարարության « Գյուղատնտեսական ծրագրերի իրագործման գրասենյակ և պետական հիմնադրամի (ԳԾԻԳ ՊՀ) և համայնքի համատեղ ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել համալիր միջոցառումներ և ծրագրեր , որոնց արդյունքում արոտների ճիշտ օգտագործման և բարելավման, հեռագնա արոտների օգտագործման , մսուրային շրջանում անասուններին անհրաժեշտ քանակի և որակի կերերով ապահովելու միջոցով համայնքում գյուղատնտեսական արտադրությունը կդրվի նոր մակարդակի վրա:

Արդեն ընդունվել և նախագծա - նախահաշվային փուլում է գտնվում արոտների ջրարբիացման ծրագիրը , որը նախատեսում է հեռագնա արոտներում անասուններին ապահովել խմելու ջրով : Տեղադրվելու են թվով երեք խմոցներ և սարատեղի 3 աղբյուրների ջրերը խողովակաշարով միացվելու են այդ խմոցներին :

ՀՀ Բնապահպանության նախարարությունից արդեն ստացել ենք նշված աղբյուրների ջրօգտագործման թույլտվությունը :

Պայմանավորվածություն է ձեռք բերվել „ Հեյֆեր” ընկերության հետ համայնքի թվով 50 տնտեսությունների 300 - ական կիլոգրամ բարձրորակ գարնանացան գարու սերմացույով ապահովելու , ինչպես նաև Գեղամավան համայնքում խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորման գործը կազմակերպելու հարցում:

Համաշխարհային սոցիալ – տնտեսական ճգնաժամը իր բացասական ազդեցությամբ չի շրջանցել նաև մեր համայնքը : Զգալիորեն վատթարացել է բնակչության սոցիալական վիճակը , որը իր հերթին բերել է համայնքի կողմից հարկային պարտավորությունների կատարման հարցում նկատելի դժվարությունների :

Չնայած առկա դժվարություններին ու խնդիրներին , համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը կատարեցինք 100 %-ով :

Ներկայացնեմ Գեղամավան համայնքի 2011թ. բյուջեի կատարողականի ցուցանիշները ըստ առանձին եկամտատեսակների

	պլան	փաստ.	%
սեփական եկամուտ	7364.6	7368.4	100.0
հողի հարկ	5528.1	2749.0	50.0
գույքահարկ ֆ/անձ	1586.5	2254.2	142.1
գույքահարկ իրավաբ. անձ.		777.5	
տեղական տուրքեր	50.0	80.0	
հողի վարձավճար	200.0	1507.0	

Ֆոնդային բյուջե
հողի օտարումից եկամուտ

769.2

Ցավոք առանձին հարկատեսակներից ցածր է հարկի հավաքագրման մակարդակը, որը ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Պատճառներից կարելի է հիշատակել նախ այն, որ վերջին տարիների եղանակային անբարենպաստ պայմանները, ինչպես նաև բարձրորակ սերմերի բացակայությունը հանգեցրին այն բանին, որ անջրդի պայմաններում իրականացվող գյուղատնտեսական արտադրությունը դարձավ ոչ եկամտաբեր: Ավելին՝ բազմաթիվ գյուղացիական տնտեսություններ չկարողանալով փակել իրենց ծախսերը, աստիճանաբար սկսեցին «լքել» հողը և վարել պասիվ գյուղատնտեսություն:

Հաշվետու տարվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել է համայնքի ավագանու 5 նիստ, մշակվել են որոշումների նախագծեր, կայացվել են համայնքի սոցիալ – տնտեսական զարգացմանը և տեղական ինքնակառավարման մարմնի նորմալ գործունեությանը նպաստող 25 որոշումներ:

Հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարի մոտ ընդունելության համար գրանցվել են թվով 77 քաղաքացիներ: Սակայն, քաղաքացիների ընդունելությունը համայնքի ղեկավարի մոտ կատարվել է մշտապես, նաև՝ առանց գրանցման: Զննարկվել են բնակչությանը հուզող ամենատարբեր հարցեր, դիմումներ և իմ լիազորությունների շրջանակներում կայացվել համայնքի և տնտեսվարող սուբյեկտների շահերից բխող համայնքի նորմալ կենսագործունեությանը նպաստող թվով 87 որոշումներ:

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ստուգվեց գյուղապետարանի ֆինանսատնտեսական գործունեությունը: Որոշակի բացթողումներ և դիտարկումները, որոնք հիմնականում վերաբերվում էին տեղական հարկերի գանձման կառուցվածքին, առաջիկա տարում ամբողջովին կշտկվեն: